ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

17 փետրվարի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

24
(2690)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԹԻՄԱԿԻՑՆԵՐԸ ԽԱԲԵԼ ԵՆ. ՄԱՍ 12

2022-ի տարեվերջին կառավարության նիստերից մեկում վարչապետ Նիկոլ Փաշինյանը, անդրադառնալով ճանապարհների՝ խոստացված տարեկան 500 կմ վերանորոգմանը, նախարար Գնել Սանոսյանից հետաքրքրվեց՝ արդյոք կատարվել կամ կատարվում է տրված խոստումը, ինչին ի պատասխան՝ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարը հայտարարեց, որ ոչ միայն կատարել են խոստումը, այլ նաեւ գերակատարել են 20 կմ-ով: «Փաստերի ստուգման հարթակ»-ն ուսումնասիրեց վերջին 3 տարիներին երկրում իրականացված ասֆալտապատման աշխատանքները եւ պարզեց, որ թեեւ նախորդ տարիներին Հայաստանում իրականացված ասֆալտապատման աշխատանքները, նախորդ տարիների համեմատ, ռեկորդային են, սակայն չեն իրականացվել այն ծավալով, որով խոստանում են ներկայիս իշխանությունները: Սկսած 2020 թվականից՝ իշխանությունները յուրաքանչյուր տարի խոստացել են կառուցել 500 կմ ճանապարհ: Այս թվի մեջ չեն մտնում Հյուսիս-հարավ ճանապարհի եւ համայնքային սուբվենցիոն ծրագրերով ասֆալտապատված ճանապարհները: 2020 թվականին, ի հակառակ կառավարության խոստման, Հայաստանում ասֆալտապատվել է մոտ 388 կմ ավտոճանապարհ: Հաջորդ՝ 2021 թվականին եւս կառավարությունը խոստացավ կառուցել 500 կմ ճանապարհ: Ավելին՝ տարեվերջին կառավարության նիստերից մեկում վարչապետին զեկուցվեց, որ տարվա համար նախատեսված 500 կմ ճանապարհի միջին նորոգման ու հիմնանորոգման խոստումը կատարվելու է, սակայն 2021-ի համար եւս խոստացված եւ զեկուցված 500 կմ ճանապարհը չի վերանորոգվել: 2021-ին Հայաստանում վերանորոգվել է մոտ 386 կմ ավտոճանապարհ: 2022-ին եւս կառավարությունը սահմանեց 500 կմ ճանապարհների վերանորոգման/կառուցման նշաձող: Իրականում նախորդ տարի եւս կառավարությունը չի կատարել տված խոստումը: Ընդհանուր առմամբ, 2022-ին Հայաստանում նորոգվել է 486 կմ ավտոճանապարհ: Այսպիսով, փաստենք, որ վերջին 3 տարիներին կառավարության կողմից խոստացված տարեկան 500 կմ ճանապարհների կառուցման եւ վերանորոգման խոստումները ոչ մի անգամ իրականություն չեն դարձել, իսկ նախորդ տարիներին հիմնանորոգված ճանապարհների մի մասը 2022-ին կրկին ներկայացվել են որպես հիմնանորոգված: Եվ եթե կրկնակի հիմնանորոգումները չհաշվենք, ապա կստացվի, որ 2022-ին վերանորոգվել է ոչ թե 486, այլ 381 կմ ճանապարհ: Ստացվում է՝ հերթական անգամ Նիկոլ Փաշինյանի իշխանությունը խաբել է ՀՀ հպարտ եւ արժանապատիվ քաղաքացիներին:

Այն, որ Հայաստանում իշխանական ու ընդդիմադիր պատգամավորների հարաբերությունները խիստ բեւեռացված են, գաղտնիք չէ: Այն նույնիսկ նկատվեց ԱԺ դահլիճում միմյանց վրա նետված շշերի եւ հրահրված ծեծկռտուքի ժամանակ: Թշնամանքը ակնհայտ է. անգամ ԱԺ միջանցքներով քայլելիս միմյանց չեն բարեւում: Հազվադեպ կտեսնես, որ ՔՊ-ականները, օրինակ, քայլեն այն հատվածներով, որտեղ ընդդիմադիրների աշխատասենյակներն են, կամ էլ՝ հակառակը: Իշխանությունը տարբեր երեւակայելի ու աներեւակայելի միջոցներ է հորինում, որպեսզի չեզոքացնի ընդդիմադիրներին, որոնք դաժան քննադատում են ՔՊ-ին: Իսկ, ահա, երբ Նիկոլ Փաշինյանն է գալիս խորհրդարան՝ ԱԺ-ի հետ հարցուպատասխանի, խորհրդարանը վերածվում է հատուկ պահպանվող տարածքի, որտեղ ամենուր զինված համազգեստավորներ են: Հետաքրքիր է, որ այս ֆոնին ՔՊ-ականները ընդգծված լավ վերաբերմունք ունեն «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արմեն Գեւորգյանի նկատմամբ: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՔՊ-ականներից ոմանք հաճախ են որեւէ իրադարձություն քննարկում Գեւորգյանի հետ, նրա կարծիքը հարցնում: Անգամ ընդդիմադիրների համար է առեղծված ՔՊ-ականների այս հատուկ վերաբերմունքը Արմեն Գեւորգյանի նկատմամբ: Իշխանականների այս բարյացակամ վերաբերմունքը թերեւս կարելի է բացատրել նրանով, որ Արմեն Գեւորգյանը հիմականում չի խառնվում իշխանություն-ընդդիմադիր գզվռտոցին, զուսպ է իր ելույթներում, ԱԺ-ում ելույթ է ունենում հազվադեպ, այն էլ՝ խոսում բացառապես բուն թեմայից ու չի քննադատում իշխանություններին:

«Ժողովուրդ» օրաթերթին որոշ մանրամասներ են հայտնի դարձել Ազատ գյուղի կացարանի հրդեհի ողբերգական դեպքով հարուցված գործի շրջանակներում սպա Եղիշե Հակոբյանի տված ցուցմունքից: Մասնավորապես, սպան պատմել է, թե ինչպես է բռնկվել հրդեհը, որը այնքան էլ չի համապատասխանում Նիկոլ Փաշինյանի կողմից ՀՀ կառավարության նիստում նկարագրված մանրամասներին: Տեղեկացանք, որ սպան, որը երկար ժամանակ հրաժարվում էր ցուցմունք տալ, իրավապահներին հայտնել է, որ, այո, բենզինն ինքն է լցրել վառարանի մեջ, բայց անմիջապես կրակ չի բռնկվել, ինքը փոքր ուշ մոտեցել է վառարանին, որ տեսնի, թե ինչու կրակ չկա, ու այդ պահին վառարանից բոց է դուրս եկել: Կրակի պահից սպան բենզինի տարան դուրս է նետել, որի հետեւանքով բենզինի մի մասը լցվել է դռան վրա ու դուռը բռնկվել է: Ըստ սպայի խոսքերի՝ մինչեւ տղաների ննջասենյակին կրակը հասնելը մոտ 20 րոպե ժամանակ է եղել, ու այդ ընթացքում ինքը գոռացել, աղաղակել է, որ հրդեհ է: Սպան ցուցմունքում նշել է, որ իր հետ է եղել զինվորներից եւս մեկը՝ Լեւոն անունով, եւ իրենք միասին են գոռացել, աղաղակել, սակայն ընդամենը երկու զինվոր է դուրս եկել հրդեհվող տնից... Սպան հայտնել է, որ իր համար մինչեւ հիմա ահասկանալի է, թե ինչու մյուս զինվորները դուրս չեն եկել, չեն փախել կացարանից: «Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն՝ քննիչը հարց է տվել սպային, թե նա տղաների հետ արդյոք կոնֆլիկտ ունեցել է. սպան պատասխանել է, որ զինվորներից որեւէ մեկի հետ խնդիր չի ունեցել: Հիշեցնենք, որ ողբերգական դեպքը եղել է հունվարի 19-ին: Armlur.am-ի տեղեկությունների համաձայն՝ թմրաբանական փորձաքննության էր ենթարկվել Ազատ գյուղում 15 զինծառայողների մահվան գործով անցնող սպա Եղիշե Հակոբյանը. փորձաքննության եզրակացության պատասխանը նախաքննական մարմինը ստացել է, որտեղ նշված է եղել, որ սպայի մոտ թմրանյութի հետքեր չկան:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի տնօրեն Արգամ Հովսեփյանի պաշտոնավարման օրերը հաշված են: Բանն այն է, որ ՀՀ գլխավոր դատախազությունում մի քննարկում է եղել, որտեղ բարձրացվել է հարց, թե ինչու է դատախազությունը պարտվում դատարաններում: Պարզաբանում է հնչել, որ շատ քրեական գործերով, որով դատախազությունը պարտվում է դատարաններում, հիմնական պատճառը փորձաքննությունների արդյունքներն են: Այսինքն՝ տրված փորձագիտական եզրակացություններն են պարտության պատճառը, ու հիմնական խնդիրը եղել է հենց Արգամ Հովսեփյանի ղեկավարած ՊՈԱԿ-ը: Եվ միակ բանը, որ այս պահին հետ է պահում Հովսեփյանին ազատելու մտքից, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով, կրկին կադրային խնդիրներն են, քանի որ համապատասխան կադր դեռ չեն կարողանում գտնել: Հիշեցնենք նաեւ, որ հենց այս նույն ՊՈԱԿ-ն է եզրակացություն տվել Արթուր Սարգսյանի՝ Հաց բերողի հարցով: Եւ այժմ քրեական գործով մեղադրանք է առաջադրված ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արմեն Չարչյանին, որն այդ ժամանակ «Իզմիրլյան» բժշկական կենտրոնի տնօրենն էր: Արդար կլիներ, որ քրեական հետապնդում իրականացվեր ոչ միայն Չարչյանի, այլ այդ եզրակացությունը տված մյուս դերակատարների, այդ թվում՝ Արգամ Հովսեփյանի նկատմամբ, սակայն դատախազ Աննա Վարդապետյանին հետաքրքրում է միայն Չարչյանին մեղադրելը:

ՆՍՏԵԼ ՈՒ ԽՈՍԵԼ

ՈՉ ՄԵԿԻՆ ՊԵՏՔ ՉԷ «ՖՌՌԱՑՆԵԼ»

Արցախում ստեղծված ճգնաժամի վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ՀՀ նախկին վարչապետ Խոսրով Հարությունյանի հետ:

-Պարոն Հարությունյան, Արցախն արդեն 2 ամսից ավելի է՝ շրջափակված է, Հայաստանի իշխանություններն ասում են՝ մենք չենք ցանկանում բանակցել այս հարցով. դա Ռուսաստանի պատասխանատվության գոտին է: Ռուսաստանը կրավորական կեցվածք է որդեգրել, որեւէ էական քայլ չի անում: Ինչպե՞ս եք այս պայմաններում խնդրի լուծումը պատկերացնում, որքա՞ն կդիմանա Արցախը շրջափակման մեջ:

-Հայաստանի իշխանությունների այն պնդումները, թե Լաչինի միջանցքի ապաշրջափակման խնդիրը լոկ Արցախի Հանրապետության եւ Ադրբեջանի իշխանությունների խնդիրն է, կամ ռուս խաղաղապահների պատասխանատվության ոլորտն է, հիմնավոր չեն: Բոլոր այն հայտարարությունները, թե դա ռուս խաղաղապահների պատասխանատվության գոտին է, կամ Արցախն ու Ադրբեջանը թող իրար հետ բանակցեն, ընդամենը խնդրից խուսափելու հնարքներ են մեր իշխանությունների համար: Արցախի միջանցքի կարգավիճակը ամրագրված է նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ, այդ հայտարարության տակ կա նաեւ Նիկոլ Փաշինյանի ստորագրությունը. սա նշանակում է, որ հայտարարությունը ստորագրող բոլոր կողմերը, այդ թվում՝ նաեւ Նիկոլ Փաշինյանը, ստանձնել են հայտարարությամբ ամրագրված բոլոր կետերի իրականացման պատասխանատվությունը, ուստի բոլորի հետ հավասար նա եւս պարտավորություններ ունի: Մենք պետք է արձանագրենք հետեւյալը. այդ եռակողմ հայտարարության 6-րդ կետի 2-րդ մասում հստակ գրված է, որ կողմերի համաձայնությամբ 3 տարվա ընթացքում պետք է մշակվի Լաչինի միջանցքին ալտերնատիվ միջանցքի կառուցման պլան, այսինքն՝ գործող միջանցքին ալտերնատիվ միջանցք կառուցելու ճանապարհային քարտեզ պետք է կազմվեր: Այն, որ շատերը դիտում են Լաչինի միջանցքը որպես ճանապարհ, դա սխալ է: Միջանցքը կրիտիկական ենթակառուցվածքների համախումբն է, դա եւ՛ ճանապարհ է՝ մարդկանց եւ բեռների անարգել տեղափոխումը երաշխավորող, եւ՛ գազատարն է՝ Արցախին անարգել գազ ապահովելու համար, եւ՛ կապի մալուխն է: Այսինքն՝ միջանցք ասելով՝ պետք է հասկանանք այնպիսի ենթակառուցվածքների համախումբ, որոնց միջոցով երաշխավորվում է Արցախի բնականոն կենսագործունեությունը այնքան ժամանակ, մինչեւ Արցախի կարգավիճակի հարցը կլուծվի: Այս պահին կողմերից որեւէ մեկի մոտ այս մոտեցումը չկա: Այն մոտեցումը, որին մենք հիմա ականատես ենք, դա բխում է բացարձակապես Ադրբեջանի շահերից: Հիմա բոլոր կողմերը՝ թե՛ Հայաստանը, թե՛ Ռուսաստանը, թե՛ առավել եւս Ադրբեջանն օգտվում են ստեղծված խառնաշփոթից, եւ ամեն մեկը փորձում է դիվեդենտներ քաղել:

-Այս ճգնաժամից դուրս գալու ի՞նչ ելքեր եք տեսնում:

-Այս իրավիճակից դուրս գալու համար պետք է հասնել նրան, որ, նախ, Բերձորի միջանցքի հետ կապված բանակցային գործընթաց սկսվի, իսկ այդ բանակցությունները պետք է սկսվեն հետեւալ կոնցեպտով՝ հայկական կողմը պետք է ներկայացնի Բերձորի միջանցքի ֆունկցիոնալ նշանակության իր մեկնաբանությունները եւ պահանջ ներկայացնի կողմերին՝ հետեւել եռակողմ հայտարարության 6-րդ կետի 2-րդ մասի կատարմանը: Այս դեպքում արդեն բանակցություններին կարող են մասնակցել նաեւ Արցախը եւ Արցախի իշխանությունները, բայց քանի դեռ եռակողմ հայտարարությունը ստորագրող կողմերի մոտ Բերձորի միջանցքի ֆունկցոնալ կարեւորությունն ընկալված չէ, խեղված է, այն դիտարկվում է որպես ճանապարհ, այս դեպքում խնդիրը չի լուծվի: Երբ խոսում են ապաշրջափակման մասին, ասում են՝ հնարավորություն տանք մարդիկ անարգել տեղաշարժվեն կամ բեռները տեղափոխվեն. լավ, ենթադրենք՝ հիմա թույլ տվեցին, բայց մի շաբաթ հետո նորից փակեցին, ի՞նչ պետք է անեք, ինչո՞ւ եք բանակցում: Ուրեմն, ապաշրջափակել նշանակում է բանակցային ճանապարհով գալ այնպիսի իրավական, տնտեսական ու քաղաքական լուծումների, որոնք կողմերին զերծ կպահեն սեփական նպատակների համար Արցախի համար նոր պրոբլեմներ ստեղծելուց: Արդյոք Ադրբեջանը պատրա՞ստ է սրան. իհարկե ոչ: Ռուսաստանն էլ, թվում է, թե խնդրի լուծման համար ամենաշահագրգիռ կողմերից պետք է լիներ, քանի որ ստեղծված խնդիրը նաեւ իր աշխարհաքաղաքական հեղինակությանն է հարվածում, բայց այսօր, հաշվի առնելով Արեւմուտքի գլոբալ առճակատումը Ռուսաստանի հետ, ինչպես նաեւ այն երկաթյա վարագույրը, որը ձեւավորվում է Ռուսաստանի ու Արեւմուտքի միջեւ, Ռուսաստանն այլեւս ռազմական, տնտեսական, քաղաքական նկատառումներում այլընտրանք չունի, ուստի այժմ Թուրքիայից ու Ադրբեջանից հիմա անհամեմատ շատ է կախված: Հետեւաբար պետք է նստել ու բաց տեքստով խոսել կողմերի հետ, ոչ մեկին պետք չէ «ֆռռացնել»:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ

Այսուհետ փոխվարչապետերի հրավերով Հայաստան ժամանած պատվիրակությունների այցերի հետ կապված ծախսերի ֆինանսավորումը եւս կիրականացվի պետական արարողակարգի ծառայության ներկայացրած հաշվետվության հիման վրա:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ այդպիսի նախագիծ է ներկայացրել ՀՀ արտաքին գործերի նախարարությունը: Նոր փոփոխությամբ՝ «բարձրաստիճան պատվիրակությունների» հասկացության մեջ առաջարկվում է ներառել նաեւ Հայաստանի Հանրապետության փոխվարչապետերի հրավերով Հայաստանի Հանրապետություն ժամանող օտարերկրյա պետությունների փոխվարչապետերի գլխավորած պատվիրակությունները: Այդ անհրաժեշտությունը պայմանավորված է շատ երկրներում, այդ թվում՝ նաեւ Հայաստանի Հանրապետությունում փոխվարչապետերի գործառութային եւ արարողակարգային ավելի մեծ դերակատարում ունենալու եւ այցերը պատշաճ մակարդակով եւ օպերատիվ կազմակերպելու հանգամանքով:

ՄԵԿՆԵԼ Է ՖՐԱՆՍԻԱ

ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը փետրվարի 23-25 կմեկնի Ֆրանսիա: ArmLur.am-ը տեղեկացավ, որ նախարարի գլխավորած պատվիրակությունը Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում մասնակցելու է Ֆրանսիա-Հայաստան առաջին տնտեսական գագաթնաժողովին եւ միջազգային գյուղատնտեսական ցուցահանդեսին (SIA):

Մենք տեղեկացանք, որ նախարար Վահան Քերոբյանը, փոխնախարար Նարեկ Տերյանը, մյուս տեղակալ Անի Իսպիրյանը, նախարարության միջազգային համագործակցության վարչության պետ Արմեն Այվազյանը եւ միջազգային համագործակցության վարչության երկկողմ եւ բազմակողմ համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ Աստղիկ Ալեքսանյանը Ֆրանսիայի Հանրապետություն կգործուղվեն ՀՀ 2023 թվականի պետական բյուջեով՝ արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

Ինչպես հայտնի է, ծառայողական գործուղման մեկնած անձանց գործուղման ծախսերի փոխհատուցումը կատարվում է՝ 29 դեկտեմբերի 2005 թվականի որոշման համաձայն: Ըստ այդմ, տեղեկացանք, որ Փարիզ մեկնելու համար մեկ օրվա օրապահիկը սահմանված է 130 եվրո, իսկ գիշերակացի համար էլ տրամադրվում է 153 եվրո գումար: Այսինքն՝ ստացվում է՝ Հայաստանի պատվիրակության՝ Ֆրանցիա այցը կարժենա 4 հազար եվրոյից (1 մլն 600 հազար դրամից ավելի) ավելի գումար:

ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐ

ՀԱՅՏՆՎԵԼ ԵՆ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ԱԹՈՌԻՆ

Նախկին իշխանությունների ժամանակ պաշտպանության նախարարի պաշտոնը զբաղեցրած անձինք այժմ անցնում են տարբեր քրեական գործերով:

Պաշտպանության նախկին նախարար, նախկին նախագահ Սերժ Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել մոտ կես միլիարդ դրամ գումարի հափշտակության կատարումը կազմակերպելու համար: Նույն գործով պետությունից առանձնապես խոշոր չափերով գումարի հափշտակությանը դրդելու համար մեղադրանք է առաջադրվել «Ֆլեշ» ընկերության նախագահ Բարսեղ Բեգլարյանին:

Նախկին նախարար Միքայել Հարությունյանը մեղադրվում է 2008 թվականի մարտի 1-ին՝ նախագահական ընտրություններից հետո սահմանադրական կարգը տապալելու համար: Միքայել Հարությունյանն այժմ ապաստանել է Ռուսաստանի Դաշնությունում:

Սեյրան Օհանյանը, որն այժմ «Հայաստան» խմբակցության ղեկավարն է, անցնում է երեք քրեական գործով, եւ նրան արդեն մեղադրանքներ են առաջադրվել: Սեյրան Օհանյանը մեղադրվում է զորամաս եւ ռազմական նշանակության այլ շինություններ ներառող հատուկ նշանակության «Երասխ-1» տարածքն անհամեմատ էժան վաճառելու համար, ՊՆ-ի սեփականություն հանդիսացող այս շենքի եւ հարեւանությամբ գտնվող տարածքը վաճառելու համար: Նախկին նախարարն անցնում է նաեւ այլ քրեական գործերով, օրինակ՝ Օհանյանն անցնում է «անպիտան հրթիռների» քրգործով:

Այս նույն գործով անցնում է նաեւ Դավիթ Տոնոյանը: Տոնոյանը մեղադրվում է շուրջ 4.7 միլիոն դոլարի չարաշահման համար:

Նախկին նախարարներից ամենաթարմ դեպքը Վիգեն Սարգսյանին առնչվող քրեական վարույթն է: Նա, ըստ դատախազության, 2018 թվականի հունվարին նախարարության հաշվեկշռում գտնվող Երեւանի Գրիգոր Հասրաթյան փողոցի 25/6 հասցեի բազմաբնակարան շենքի բնակարանների բաշխման գործընթացում դիտավորությամբ կատարել է իր լիազորությունների շրջանակից ակնհայտորեն դուրս գտնվող գործողություններ: Ըստ Դատախազության՝ Վիգեն Սարգսյանի որոշմամբ՝ 26 բնակարան տրվել է այն զինծառայողներին, որոնք կամ հերթացուցակում ուշ են հայտնվել, կամ ընդհանրապես ցուցակ չպետք է ընդգրկվեին:

ՆԱՀԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԿԳՈՐԾՈՒՂՎԵՆ ՀՆԴԿԱՍՏԱՆ

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի կարգադրությամբ՝ ԱԺ փոխնախագահ Հակոբ Արշակյանը եւ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներ Արեն Մկրտչյանն ու Ծովինար Վարդանյանը փետրվարի 28-ից մարտի 5-ը աշխատանքային այցով կգործուղվեն Հնդկաստան՝Նյու Դելի:

Նկատեք, որ համապատասխան կարգադրության մեջ հստակեցված էլ չէ, թե ՔՊ-ականները ինչ հանդիպումներ են ունենալու Հնդկաստանում:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ գործուղման հետ կապված ճանապարհածախսի, օրապահիկի, ինչպես նաեւ գիշերավարձի ծախսերը կատարվելու են պետբյուջեի հաշվին:

240 ՄԼՆ ԴՐԱՄ՝ ԿԳՄՄՆ-ԻՆ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը 240 մլն դրամ է ուղղելու Հայ կինոյի հիմնադրման 100-ամյա հոբելյանական միջոցառումների կազմակերպման եւ իրականացման համար: Հիմնավորման մեջ նշվում է, թե ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը՝ ՀՀ կառավարական հոբելյանական հանձնաժողովի գլխավորությամբ, ոլորտում առաջատար կազմակերպությունների եւ անհատների մասնակցությամբ, նախաձեռնել են տասնյակից ավելի միջոցառումների եւ հրատարակչական ծրագրերի իրականացում: Ծրագրերն իրականացվելու են 4 ուղղություններով՝ ռազմավարական, միջազգային, հրատարակչական եւ ներպետական միջոցառումների իրականացում: Եվ հենց Հայ կինոյի հիմնադրման 100-ամյա հոբելյանական միջոցառումների պատշաճ կազմակերպման եւ անխափան իրականացման նպատակով էլ առաջարկվում է ֆինանսական հատկացումներ տրամադրել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի պահուստային ֆոնդից:

Ի՞ՆՉ ԵՆ ՊԱՀԱՆՋՈՒՄ

ՀՀ կառավարությունը թույլտվություն կտա Իրանի Իսլամական Հանրապետությանը Հայաստանում հողամաս ձեռք բերել: ArmLur.am-ը տեղեկացավ, որ Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանությունը հայտագրով դիմել է ՀՀ արտաքին գործերի նախարարություն՝ ՀՀ քաղաքացի Լիլիթ Լեւոնի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երեւան, Ավան Հ. Աճառյան փողոց 35/23 հասցեում գտնվող բնակելի տունը օրենքով սահմանված կարգով ձեռք բերելու համար՝ դեսպանի կեցավայրի տեղակայման նպատակով: Թույլտվության հիմնավորման մեջ նշվում է, որ Հայաստանի եւ Իրանի միջեւ բարեկամությունն ունի դարերի պատմություն: Այդ բարեկամության եւ երկկողմ համագործակցության հաստատման եւ զարգացման համար նոր հնարավորություններ եւ նախադրյալներ են ստեղծվել Հայաստանի անկախացումից հետո: Երկու երկրների միջեւ արդյունավետ համագործակցությունն ընթանում է էներգետիկայի, բնապահպանության, մշակույթի եւ այլ ոլորտներում:

ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՉԵՆ ԲԱՑԱՌՈՒՄ

ՓԱՇԻՆՅԱՆՆ ՈՒ ԱԼԻԵՎԸ ՄԵԿՆՈՒՄ ԵՆ ՄՅՈՒՆԽԵՆ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը մեկնում է Մյունխեն՝ մասնակցելու փետրվարի 17-19-ն անցկացվող անվտանգության համաժողովին: Իլհամ Ալիեւը նույնպես մասնակիցների թվում է:

Հայաստանի ու Ադրբեջանի ղեկավարների հանդիպումն ադրբեջանական լրատվամիջոցները չեն բացառում: Հայաստանի կառավարությունից փոխանցում են՝ այս պահին նման տեղեկություն չունեն: Միայն ասում են՝ Փաշինյանն այնտեղ հանդիպումներ կունենա մի շարք պետությունների ղեկավարների հետ՝ առանց հստակեցնելու:

Փաշինյանն ու Ալիեւը 44-օրյա պատերազմից մի քանի ամիս առաջ՝ 2020-ի փետրվարին, մյունխենյան հարթակն օգտագործեցին. բանավեճի ֆորմատով բաց քննարկում անցկացվեց: Հենց այդ քննարկմանը Փաշինյանը հասավ մինչեւ Տիգրան Մեծ:

Մյունխենում է լինելու նաեւ ԱՄՆ-ի պետքարտուղարը, որը հայ-ադրբեջանական ուղիղ շփումների կողմնակից է: Պաշտոնական Բաքուն հաղորդեց, որ հեռախոսազրույցի ընթացքում բանակցային գործընթացի հեռանկարներին, 2 ամսից ավելի փակ պահվող Լաչինի հարցին են անդրադարձել Բլինքենի եվրոպական եւ եվրասիական հարցերով տեղակալ Քերընը Դոնֆրիդը եւ Ադրբեջանի արտգործնախարար Ջեյհուն Բայրամովը: Սա պաշտոնյաների երկրորդ հեռախոսազրույցն է վերջին մեկ շաբաթվա ընթացքում: Նախորդին եւս այդ հարցերին էին քննարկվել: Նույն այդ օրը ամերիկացի պաշտոնյան նաեւ Հայաստանի արտգործնախարար Արարատ Միրզոյանի հետ էր խոսել, անդրադարձել Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորմանը:

Ի դեպ, Արարատ Միրզոյանը եւս վարչապետի հետ կմեկնի Մյունխեն:

Միեւնույն ժամանակ Հայաստանը ավարտել է Ադրբեջանի հետ խաղաղության եւ հարաբերությունների հաստատման պայմանագրի նախագծի հերթական փուլի աշխատանքները եւ առաջարկները փոխանցել ադրբեջանական կողմին. երեկ կառավարության նիստի ժամանակ հայտարարեց վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Փաշինյանը տեղեկացրեց, որ փաստաթուղթը փոխանցել են նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրներին:

«Առաջարկներ ասելով՝ պետք է նկատի ունենալ ամբողջական փաստաթղթի նախագիծը՝ մեր առաջարկներով: Մենք նախագծի վրա աշխատում ենք հետեւյալ տրամաբանությամբ՝ ստանալ մի փաստաթուղթ, որը ցանկացած պահի պատրաստ ենք ստորագրել: Հասկանալի է, իհարկե, որ այդ փաստաթուղթը պիտի ընդունելի լինի Ադրբեջանի համար: Հույս ունենք, որ արդեն երեք փուլ բանակցությունների արդյունքում նկատված որոշակի առաջընթացը հնարավոր կլինի զարգացնել», - ասաց գործադիրի ղեկավարը:

Օրերս Բեռլինում Հայաստանի արտգործնախարար Արարատ Միրզոյանը հայտարարեց, որ Ադրբեջանն արձագանքել է խաղաղության պայմանագրի նախագծի վերաբերյալ հայկական կողմի առաջարկներին, դրանք փոխանցել Երեւանին, Երեւանն էլ այժմ աշխատում է դրա վրա: «Հայաստանը հաստատակամորեն է ներգրավված այս բանակցություններում, եւ մենք նպատակ ունենք շարունակել մեր ակտիվ ջանքերը մեր տարածաշրջանում կայուն եւ երկարատեւ խաղաղություն կառուցելու գործում», - ասել էր Միրզոյանը:

Փաշինյանը ներկայացրեց Հայաստանի տեսլականը՝ փաստաթուղթը պետք է պարունակի պայմանավորվածությունների այնպիսի տրամաբանություն, հակակշիռների ու զսպումների այնպիսի գործուն համակարգ, որը կբացառի տեւական եւ կայուն խաղաղության խաթարման որեւէ սցենար:

«Փաստաթղթի ստորագրումը ոչ թե պիտի վերակերպվի պատերազմի՝ արդեն խաղաղության պայմանագրի հիման վրա (սա աբսուրդ է հնչում, բայց կարող է լինել նաեւ այսպիսի սցենար), այլ, ընդհակառակը, իսկապես նշանակի տեւական խաղաղություն», - ասաց Փաշինյանը՝ շեշտելով այսպիսի պայմանագիրը օր առաջ ստորագրելու կառավարության եւ անձամբ իր հանձնառությունը:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ՍԱՀՄԱՆԻՆ

«Կուտական համայնքում այս պահին խաղաղ է, ամեն ինչ նորմալ է»,- ArmLur.am-ի հետ զրույցում ասաց Գեղարքունիքի մարզի Կուտական համայնքի վարչական ղեկավար Մակիչ Թովմասյանը:

«Մարդիկ զբաղված են իրենց առօրյա գործերով. ճիշտ է, մտահոգված են, բայց սպասենք՝գարունը գա, տեսնենք՝ինչ կլինի»,-նշեց նա:

Հիշեցնենք, որ փետրվարի 14-ին՝ժամը 18:05-ի սահմաններում, Նորաբակի ուղղությամբ, նախնական տվյալներով, հակառակորդի կրակոցից հրազենային վիրավորում է ստացել ՊՆ N զորամասի զինծառայող Դ. Պ.-ն:

Զինծառայողի վիճակը գնահատվում է միջին ծանրության, կյանքին վտանգ չի սպառնում:

Դեպքի հանգամանքները լիարժեք պարզելու համար տարվում է քննություն:

ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ԹՈՒԼԱՑՆԵԼ

Հայաստանը եւ Ադրբեջանը պետք է թուլացնեն լարվածությունը եւ ընթանան համապարփակ եւ տեւական խաղաղության ուղով: Մամուլի ասուլիսի ժամանակ նման հայտարարություն է արել ԱՄՆ պետքարտուղարության պաշտոնական ներկայացուցիչ Նեդ Փրայսը:

«Թե՛ Հայաստանին, թե՛ Ադրբեջանին՝ հենց կողմերին, ինչպես նաեւ ողջ տարածաշրջանին ուղղված մեր ուղերձն այն է, որ հարկավոր է լարվածությունը թուլացնելու ուղի գտնել եւ նորից ընթանալ համապարփակ եւ կայուն խաղաղության ուղով: Մենք ներգրավված ենք եղել այդ ջանքերում, ներգրավված ենք եղել այդ ջանքերում երկկողմանիորեն, ներգրավվել ենք այդ ջանքերում բազմակողմանիորեն եւ կշարունակենք անել հնարավոր ամեն բան ուղղակիորեն կողմերի հետ, ինչպես նաեւ բազմակողմ կառույցների եւ խմբավորումների միջոցով այդ գործն առաջ մղելու համար: Մենք հույս ունենք, որ մյուս երկրները կուղարկեն ճիշտ նույն ուղերձը»,- ասել է Փրայսը:

Պատասխանելով այն հարցին՝ արդյոք ԱՄՆ-ն ողջունում է Երեւանի եւ Անկարայի միջեւ վերջին շփումները Թուրքիայում տեղի ունեցած երկրաշարժից հետո՝ Նեդ Փրայսը նշել է, որ Վաշինգտոնը ողջունում է աշխարհի բոլոր երկրներին, որոնք ավերիչ երկրաշարժերից հետո կանգնել են Թուրքիայի եւ Սիրիայի ժողովուրդների կողքին:

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵԼ Է

ՍՈՒՏ ՄԱՏՆՈՒԹՅՈՒՆ՝ ՅՈՒՅՄՈՒՆՔ ԿԵՂԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչությունում ավարտվել է Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանի կողմից քաղաքացի Ա.Օ.-ին ընտրակաշառք տալու մասին հաղորդում տալուն հարկադրելու վերաբերյալ սուտ մատնության դեպքի նախաքննությունը:

Վարութային եւ ապացուցողական գործողություններով ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում քննվող քրեական գործով վկա Ա.Օ.-ն, գիտակցելով, որ իր տրամադրած տեղեկատվությունը կեղծ է, նախազգուշացված լինելով սուտ մատնություն կատարելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին, 2022թ. մարտի 18-ին դատարանում ցուցմունք է տվել այն մասին, թե, իբր, ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Գորիսի բաժնի ծառայողները հարկադրել են իրեն տալ հանցագործության մասին հաղորդում եւ բացատրություն՝ Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանի կողմից իրեն ընտրակաշառք տալու վերաբերյալ:

Ա.Օ.-ն նշել է նաեւ, որ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ՀԿԳ ավագ քննիչի պաշտոնակատարը (դեպքի ժամանակ՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչը) իր վարույթում քննվող, նշված դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 154.2-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով հարուցված ծանր հանցագործության վերաբերյալ քրեական գործով կեղծել է իր ցուցմունքը՝ դրանում ներառելով սուտ տեղեկություններ՝ Գորիս համայնքի ղեկավարի կողմից իրեն ընտրակաշառք տալու վերաբերյալ: Այդկերպ նա պաշտոնատար անձանց մեղադրել է միջին ծանրության եւ ծանր հանցագործությունների կատարման համար:

2022թ. ապրիլի 15-ին այս փաստերի առթիվ ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 341-րդ հոդվածի 1-ին մասով եւ 349-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության արդյունքում ձեռք բերված տվյալներով հիմնավորվել է, որ դատարանում նրա հայտնած տեղեկությունները իրականությանը չեն համապատասխանում: Որոշում է կայացվել՝ ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Գորիսի բաժնի ծառայողների եւ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ՀԿԳ ավագ քննիչի պաշտոնակատարի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու, ապացույցներ կեղծելու դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթը կարճելու մասին՝ հանցագործության դեպքերի բացակայության հիմքով:

Քանի որ նախաքննությամբ հաստատված տվյալները վկայել են Ա.Օ.-ի արարքում ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (համապատասխանում է գործող ՀՀ քրեական օրենսգրքի 476-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետին) նախատեսված հանցանքի հատկանիշների առերեւույթ առկայության մասին, այդ առթիվ նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում, քննիչի միջնորդության հիման վրա, 2022թ. նոյեմբերի 23-ին հսկող դատախազի կողմից որոշում է կայացվել Ա.Օ.-ի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին: Վերջինիս մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի վերոնշյալ հոդվածով, եւ նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել բացակայելու արգելքը: Նախաքննությունն ավարտվել է, եւ քրեական վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են հսկող դատախազին:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՏՆԻ Է ՊԱՏԱՍԽԱՆԸ

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ թմրաբանական փորձաքննության էր ենթարկվել Ազատ գյուղում 15 զինծառայողների մահվան գործով անցնող սպա Եղիշե Հակոբյանը: Մեզ հայտնի դարձավ, որ փորձաքննության եզրակացության պատասխանը նախաքննական մարմինը ստացել է, որտեղ նշված է եղել, որ սպայի մոտ թմրանյութի որեւէ հետքեր չկան: Տեղեկությունը փորձեցինք պարզել նաեւ սպայի փաստաբան Հովսեփ Սարգսյանից, որը հաստատեց տեղեկությունը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՎԱՔՆԵՐԻ ՆՈՐ ՓՈՒԼ

Հայաստանում մարտից կմեկնարկի պահեստազորայինների վարժական հավաքների նոր փուլը: Այս անգամ դրանք երեք ամսվա փոխարեն 25 օր կտեւեն: Առաջին փուլով հավաքներին կմասնակցեն ավելի քան 3 հազար քաղաքացիներ: 25-օրյա հավաքները պարտադիր են լինելու 20-ից 55 տարեկան բոլոր պահեստազորայինների համար, քաղաքացին ինքն է ընտրելու, թե տարվա մեջ երբ կարող է ժամանակ տրամադրել: Նոր կարգն ու որոշումը խնդիրներ է առաջացրել:

Նախ՝ նշենք, որ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքը հստակ սահմանում է, թե ինչու են անցկացվում վարժական հավաքներ: Ըստ այդ ձեւակերպման՝ վարժական հավաքի նպատակը պահեստազորի առաջին խմբում հաշվառված քաղաքացիների ռազմական ունակությունների կատարելագործումն ու վերապատրաստումն է: Կառավարության որոշմամբ միայն տեսանելի է, որ զորակոչվող պահեստազորայինները 11 օր նախապատրաստվելու են, որպեսզի 2 շաբաթ մարտական հերթապահություն կրեն: Հավաքներին վերաբերվող մեկ այլ խնդիր եւս առկա է: Այն հոդվածով, որով զորակոչվում են պահեստազորայինները, ենթադրում է գործատուի պարտավորություն վերջիններիս աշխատանքային հաստիքը պահպանելու վերաբերյալ, սակայն դա չի ենթադրում սահմանված 25-օրյա ժամկետում աշխատավարձի պահպանում:

Վարժական հավաքների գտնվելու ընթացքում քաղաքացին իր գործատուից գումար չի ստանալու: Այս մասին ահազանգել էր նաեւ ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր Տիգրան Աբրահամյանը, եւ ՊՆ-ում հավաստիացրել էին, որ այս ուղղությամբ լուծումներ են փնտրում, բայց փաստ է, որ դրանք դեռ չկան: «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 9-րդ կետով սահմանվում է, որ վարժական հավաքին մասնակցելու ընթացքում քաղաքացու հիմնական աշխատանքի վայրում (անկախ կազմակերպական-իրավական ձեւից) պահպանվում է քաղաքացու աշխատատեղը (պաշտոնը):

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՀԵՐԹԱԿԱՆ ՄԵՂԱԴՐՅԱԼԸ

Armlur.am-ին հայտնի դարձավ, որ Դավիթ Հովսեփյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հաշվառված լինելով ՀՀ ՊՆ Ջ եւ ՋՀԾ Երեւանի թիվ 4 ստորաբաժանումում՝ որպես պահեստազորային, ծանուցման հիման վրա անցել է բուժհետազոտում, որի արդյունքներով ճանաչվել է ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 23-ի թիվ 941-Ն որոշմամբ օգոստոսի 01-ից մինչեւ հոկտեմբերի 30-ը հայտարարված վարժական հավաքի կանչման ենթակա պահեստազորային, սակայն չի ներկայացել ՀՀ ՊՆ Ջ եւ ՋՀԾ Երեւանի թիվ 4 տարածքային ստորաբաժանում՝ վարժական հավաքի անցկացման վայր մեկնելու համար, եւ խախտելով «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջները՝ խուսափել է 2022 թվականի օգոստոսի 01-ից մինչեւ 2022 թվականի հոկտեմբերի 30-ն անցկացվող վարժական հավաքից այդ վարժական հավաքից ազատվելու՝ օրենսդրությամբ ասիմանված հիմքերի բացակայության դեպքում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԴԱՆԱԿԱՀԱԲՈՒԹՅՈՒՆ

Հունվարի 20-ին՝ ժամը 00:30-ին, հիվանդանոցից ոստիկանության Արմավիրի բաժին հաղորդում էր ստացվել, որ կտրած-ծակած թափանցող վնասվածքով բուժօգնության էր տեղափոխվել 51-ամյա մի տղամարդ: Բաժնից օպերատիվ խումբ էր մեկնել հիվանդանոց:

Արմավիրի բաժնի քրեական հետախույզները ձեռնարկած միջոցառումների արդյունքում պարզել են, որ հունվարի 20-ի ժամը 00:15-ի սահմաններում Արմավիր քաղաքի Երեւանյան փողոցի գիշերային ակումբի մոտ վիճաբանություն էր եղել հիվանդանոց տեղափոխվածի եւ Երեւան քաղաքի 30-ամյա ու Արմավիր քաղաքի 28-ամյա երկու երիտասարդների միջեւ: Այդ ընթացքում էլ 30-ամյա երեւանցին կտրող-ծակող առարկայով խփել էր հիվանդանոց տեղափոխվածի որովայնին:

Ձեռնարկված միջոցառումների եւ բացատրական աշխատանքի արդյունքում 28-ամյա արմավիրցին ներկայացել է ոստիկանություն: Նա ներկայացվել Արմավիրի մարզային քննչական վարչություն:

Քրեական հետախույզների ձեռնարկած միջոցառումների արդյունքում 30-ամյա երիտասարդը Երեւան քաղաքի Ներքին Շենգավիթի 11-րդ փողոցում հայտնաբերվել, ձերբակալվել եւ ներկայացվել է Արմավիրի մարզային քննչական վարչություն: Քրեական վարույթը շարունակվում է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 15-ից 16-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 53 դեպք, որոնցից 6-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐԸ ՈՒՇԱՑՐԵԼ ԵՆ

Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների աշխատողները աշխատավարձ սովորաբար ստանում են ամեն ամսվա 4-ին, սակայն մինչ այժմ ուսուցիչների ռոճիկները չկան. նրանք դժգոհում են, որ բանկերում վարկեր ունեն մարելու, իրենք աշխատավարձ չեն ստացել, որ վարկերի մուծումները կատարեն: «Ժողովուրդ» օրաթերթը Տավուշի մարզպետարանից տեղեկացավ, որ Հայաստանի այլ մարզերի դպրոցներում աշխատավարձերը ժամանակին վճարվել են, Տավուշի մարզի դպրոցներում աշխատավարձերի ուշացումը կախված է մարզի դպրոցներում կրթական նոր չափորոշիչների ներդրման հետ, որպեսզի ճիշտ հաշվարկվեն փորձնական դասարանների եւ ոչ փորձնական դասարանների ուսուցիչների աշխատավարձերի չափերը: Տավուշի մարզպետարանից հայտնեցին, որ մարզի հանրակրթական դպրոցների աշխատողները աշխատավարձ կստանան փետրվարի 17-ին, ծայրահեղ դեպքում՝ փետրվարի 20-ին:

ՍՊԱՆԴԱՆՈՑՆԵՐ ՉԵՆ ԿԱՌՈՒՑԵԼ

2020թ. հունվարի 15-ին պետք է ուժի մեջ մտեր այն որոշումը, որ անասունների մորթը պետք է կատարվեր միայն դրա համար նախատեսված, սանիտարական համապատասխան պայմաններ ունեցող սպանդանոցներում. բակերում անասունների մորթն արգելվելու էր: Հետո կառավարության որոշման ժամկետը հետաձգվեց մինչեւ 2020թ-ի հուլիսի 1-ը, ապա այդ որոշումն այդպես էլ չկիրառվեց: 2020-ին Տավուշի մարզպետարանից լրագրողիս հայտնել են, որ այդ տարի Տավուշի մարզում շահագործման կհանձնվի 11 սպանդանոց: Մարզում սպանդանոցների գործարկումը չկատարվեց, քան որ այդ գործում գոյություն ունեին փաստաթղթային խնդիրներ, նաեւ հողահատկացման հետ կապված հարցեր: Մեկ քաղաքային եւ 16 գյուղական բնակավայր ունեցող Բերդ համայնքում 1990-ական թվականներից սպանդանոց է գործում, որը հետո վաճառվել է մսամթերքի արտադրության եւ իրացման «Բեկոն» ընկերությանը: Նոյեմբերյան համայնքում երկար տարիներ գործում է սպանդանոց, որը տեղակայված է անտառային նշանակության տարածքում: Դիլիջան խոշոր համայնքում, որը ներառում է Դիլիջան քաղաքը եւ հարակից 6 գյուղերը, սպանդանոց չկա, չի կառուցվում, կա անասնապահական համալիր, ուր անասունների մորթ է կատարվում: Ի պատասխան «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկատվական հարցմանը՝ 2023թ փետրվարի 9-ին Տավուշի մարզպետարանից հայտնել են, որ մեկական սպանդանոցներ են գործում Իջեւանում, Նոյեմբերյանում, Բերդում եւ Դիլիջանում. վերջինս ներտնտեսային սպանդանոց է, բոլոր սպանդանոցները կառուցվել են 2018 թվականից հետո: Մարզպետարանի այն պնդումը, որ բոլոր սպանդանոցները կառուցվել են 2018 թվականից հետո, իրականությանը չի համապատասխանում. այդ սպանդաոցները նախկինում գործել են. չի բացառվում, որ 2018 թվականից հետո դրանք սարքավորումներով հագեցած լինեն:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿՍՏԵՂԾՎԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Կառավարությունը փետրվարի 16-ի նիստում հավանություն տվեց «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքում փոփոխությունների նախագծին:

Որոշման հիմնավորման մեջ նշվում է, որ այս նախագծի ընդունումը պայմանավորված է Հակակոռուպցիոն կոմիտեում կարգապահական վարույթների իրականացման կարգավորումների մասով առավել համապարփակ իրավակարգավորումներ ունենալու անհրաժեշտությամբ:

Հանրային ծառայության բարեվարքության ամրապնդման գործում առանցքային դերակատարում ունի կարգապահական համակարգի ձեւավորումը: Այս տեսանկյունից կարեւոր է տեղի ունեցող բոլոր խախտումներին պատշաճ ու համաչափ արձագանքի ապահովումը:

Նախագծի շրջանակներում առաջարկվում է օրենքը լրացնել համապատասխան կանոնակարգումներով՝ ուղղված կարգապահական հանձնաժողովի ձեւավորման կառուցակարգեր ստեղծելուն: Մասնավորապես, առաջարկվում է կոմիտեում ձեւավորել հանձնաժողով, որը բաղկացած է 8 անդամից:

Նախագծով ապահովվում է կարգապահական հանձնաժողովի ներառական կազմ, մասնավորապես՝ դրանում ներառվելու են Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալներից մեկը՝ կոմիտեի նախագահի որոշմամբ, Հակակոռուպցիոն կոմիտեի՝ վիճակահանությամբ ընտրվող մեկ քննիչ, մեկ օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման ծառայող, ՀՀ գլխավոր դատախազության կողմից ներկայացված մեկ դատախազ, Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված մեկ ներկայացուցիչ, մեկ իրավաբան-գիտնական, վարչապետի առաջարկությամբ ներկայացված հակակոռուպցիոն ոլորտի քաղաքականության մշակումն իրականացնող մարմնի 2 ներկայացուցիչ: Հանձնաժողովի անդամները նշանակվում են 3 տարի ժամկետով: Միաժամանակ հարկ է նշել, որ պաշտոնավարման ժամկետների տեսանկյունից առանձնահատուկ կարգավորումներ են նախատեսվել հանձնաժողովի առաջին կազմի անդամների համար: Մասնավորապես, նախագծով սահմանվել է, որ հանձնաժողովի առաջին կազմում ներգրավված Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալը, Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված ներկայացուցիչը, իրավաբան-գիտնականը, վարչապետի առաջարկությամբ ներկայացված Հակակոռուպցիոն ոլորտի քաղաքականության մշակումն իրականացնող մարմնի 2 ներկայացուցիչները պաշտոնավարում են 2, իսկ Հակակոռուպցիոն կոմիտեի՝ վիճակահանությամբ ընտրվող քննիչը, օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման ծառայողը, ՀՀ գլխավոր դատախազության կողմից ներկայացված դատախազը՝ 1 տարի ժամկետով: Նշվածը պայմանավորված է հանձնաժողովի գործունեության հետագա ընթացքի շարունակականությունը ապահովելու անհրաժեշտությամբ:

Հարկ է նաեւ նշել, որ նախագծով նախատեսվում է, որ հանձնաժողովի նախագահի պաշտոնավարման ժամկետը մեկ տարի է:

Նշված կարգավորումները ուղղված են հանձնաժողովի գործունեության անկախությունն ու հնարավոր ազդեցությունների բացառումն ապահովելուն:

Նախագծով նաեւ հստակեցվում են կարգապահական ներգործության միջոցներ կիրառելու ընթացակարգերը. նախատեսվում է, որ կոմիտեի ծառայողի նկատմամբ իրականացվող ծառայողական քննությունն ունի երկու փուլ՝նախնական ուսումնասիրություն եւ կարգապահական վարույթ:

Կարգապահական վարույթի իրականացման համար նախագծով առաջարկվում է սահմանել հստակ ժամկետներ:

Նախագծով նաեւ սահմանվել են երաշխիքներ կոմիտեի ծառայողների իրավունքների ապահովման տեսանկյունից: Նախատեսվում է, որ կոմիտեի ծառայողն իրավունք ունի բացատրություն տալու իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի առնչությամբ, ստանալ իրավաբանական օգնություն, այդ թվում՝ հանդես գալ ներկայացուցչի միջոցով:

Շահերի բախման հնարավոր դեպքերը կանխելու նպատակով նախագծով սահմանվում են այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում հանձնաժողովի անդամներին կարգելվի մասնակցել հանձնաժողովի գործունեությանը:

Միաժամանակ, նախագծով սահմանվում են հանձնաժողովի ձեւավորման ժամկետները, ինչպես նաեւ նախատեսվում են կարգավորումներ, որոնք կապահովեն կոմիտեի վարքագծի կանոնների ընդունումը եւ այլն:

ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՎԵԼ ԵՆ 7500 ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻՆՔ

ՀՀ արդարադատության նախարարությունը հայտնում է, որ 2023 թվականի հունվարի 1-ից մինչ այսօր իրական շահառուի հայտարարագիր է ներկայացրել շուրջ 7500 իրավաբանական անձ:

«Եվս մեկ անգամ տեղեկացնում ենք, որ բոլոր իրավաբանական անձինք (անկախ կազմակերպաիրավական տեսակից) պարտավոր են Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն ներկայացնել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր: Նշված պարտավորության կատարման ժամկետը լրանում է 2023 թվականի մարտի 1-ին:

Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից օրենքով սահմանված ժամկետում իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ չներկայացնելը, համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.29 հոդվածի, առաջացնում է վարչական պատասխանատվություն:

Տեղեկացնում ենք, որ նախորդ տարիներին հայտարարագիր ներկայացրած անձինք եւս մինչեւ փետրվարի 20-ը պարտավոր են ներկայացնել տեղեկատվություն՝նախորդ հայտարարագրում նշված տեղեկությունների արդիականության մասին, կամ պետք է ներկայացնեն փոփոխված հայտարարագիր:

Համապատասխան տեղեկությունները սահմանված ժամկետում չներկայացնելը եւս առաջացնում է վարչական պատասխանատվություն»,- հայտնում են ԱՆ-ից:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 7 ՃՏՊ. 7 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- Շիրակի մարզ, համայնք Արթիկ ք., Սպանդարյան փողոց, 44 հասցեում գտնվող 264 ք.մ. բնակելի տուն, 23,5 ք.մ. անասնաշենք, 12,6 ք.մ. հացատուն, 6,89 ք.մ. հենապատ եւ 0,0651 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 18350000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Շենգավիթ, Ա. Մանթաշյան փողոց, 1 շենք, 15 հասցեում գտնվող 61,75 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 27080000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 06.03.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 06.04.2023թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքերը:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

17,4 ՄԼՐԴ՝ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆԸ

Կառավարությունն իր երեկվա՝ փետրվարի 16-ի նիստում որոշեց Հայաստանում ճանապարհների հիմնանորոգման եւ կառուցման համար հատկացնել 17,4 մլրդ դրամ, որից 16,6 մլրդ դրամը շինարարության համար է:

ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանը, ներկայացնելով փաթեթը, նշեց. «Այս նախագծերից 13-ի շինարարությունը սկսվել է նախորդ տարի, դրանցից 10-ը առաջիկա ամիսներին կավարտվեն, մյուս երեքը տարվա ընթացքում կավարտենք: 6 նախագիծ ունենք, որոնց մրցույթներն արել ենք, շինարարության մեկնարկն է տրվում, եւ ունենք 24 նախագծեր, որոնցից 21-ի շինարարության մեկնարկը կտանք այս տարի, իսկ երեքը՝ հաջորդ տարի: Այս փաթեթով հիմնանորոգվող եւ կառուցվող ճանապարհների երկարությունը 89,6 կմ է, իսկ պատվիրվող նախագծերը՝ 168 կմ: Այդ բոլորի համար նախատեսվում է հատկացնել 17,74 մլրդ դրամ, որից միայն 16,626-ը՝ շինարարության համար, 173 միլիոնը՝ տեխնիկական հսկողության, 162 միլիոնը՝ հեղինակային հսկողության, եւ 79 մլն դրամ՝ նախագծային փաստաթղթերի համար»:

Սանոսյանն ընդգծեց, որ բոլոր պայմանները ստեղծված են, եւ եթե շինարարները պատշաճ աշխատեն, բավականին լավ շինարարական տարի կունենանք:

Իր հերթին վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ավանդույթի համաձայն, մանրամասն թվարկեց, թե որ ճանապարհների մասին է խոսքը: Նրա խոսքով՝ մասնավորապես կհիմնանորոգվի Երեւան-Մեղրի ճանապարհի Սուրենավան-Երասխ 12,2 կմ-անոց հատվածը:

Նախապատրաստական աշխատանքներն արդեն սկսվել են, նախատեսվում է 2023 թվականին ավարտին հասցնել դրանք: Վարչապետը նշեց, որ Քաջարանից Մեղրի ճանապարհի հատվածի շինարարության աշխատանքներն ավարտական փուլում են:

Նախատեսվում է այս տարի ավարտել Իջեւան-Նավուր-Բերդ-Այգեպար ավտոճանապարհի Իծաքար-Գանձաքար 34 կմ-անոց հատվածը:

«9 կմ-ն արդեն արված է, մնացածը կավարտենք»,- ասաց Գնել Սանոսյանը:

«2023-ին կմեկնարկենք հետեւյալ տրանսպորտային օբյեկտները՝ Մարգարա-Վանաձոր-Տաշիր ավտոճանապարհի Լոռու մարզի Ջրաշենի հատվածում՝ կամուրջ, հաջորդը՝ Գեղարքունիքի մարզում՝ Երեւան-Իջեւան ավտոճանապարհից դեպի Սեւանի թերակղզի տանող 1,1 կմ հատվածում փլուզված հողային պաստառի վերականգնում»,- ասաց վարչապետը:

Նա նաեւ նշեց, որ նախատեսվում է Ստեփանավանի Պուշկինո, Ծովագյուղի թունելը եւ Սպիտակի թունելը բերել ժամանակակից տեսքի:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

Հրապարակային սակարկություններով վաճառք

«Մուռմել-Արմանի» ՍՊԸ-ին պատկանող՝ ստորեւ նշված շարժական եվ անշարժ գույքերը հրապարակային սակարկություններով (աճուրդ) վաճառելու մասին

«Մուռմել-Արմանի» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 02.03.2023 թվականին ժամը 15:00-ին ք. Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՍՆԴ/0719/04/20 սնանկության գործով 04.09.2020 թվականին կայացված վճռով սնանկ ճանաչված «Մուռմել-Արմանի» ՍՊԸ-ի ստորեւ նշված շարժական գույքերի հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտերով.

Լոտ 1 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷԿՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված ՀՀ, Երեւան, Հալաբյան փողոց 9/1 շենք, 134 տարածք հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2069841, կադաստրային ծածկագիր՝ 01-001-023-184-001-205: Մեկնարկային գին՝ 17,800,000 ՀՀ դրամ:

Լոտ 6 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷԿՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «SCHMITZ» մակնիշի, S01 տիպարի, 2006թ. արտադրության, 578 L 01 պետհամարանիշով, գույնը՝ դեղին, թափքի տեսակը՝ հարթակ կանգնակներով, ՏՄ տեսակը՝ կիսակցորդը (նույնացման համար՝ WSM00000003046097, գտնվելու վայրը՝ ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Պռոշյան, ավտոկայանատեղի): Մեկնարկային գին՝ 4,200,000 ՀՀ դրամ:

Լոտ 7 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷԿՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «FRUEHAUF» մակնիշի, CRANE FRUEHAUF տիպարի, 1997թ. արտադրության, 090 L 01 պետհամարանիշով, գույնը՝ սպիտակ, թափքի տեսակը՝սառնարան, ՏՄ տեսակը՝կիսակցորդը (նույնացման համար՝ SFRRCVBA3VV123701, գտնվելու վայրը՝ Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝ 3,000,000 ՀՀ դրամ:

Լոտ 8 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷԿՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «DAF» մակնիշի, XF 105.460 տիպարի, 2007թ. արտադրության, 561 OF 61 պետհամարանիշով, գույնը՝դեղին, թափքի տեսակը՝սառնարան, ՏՄ տեսակը՝ բեռնատար ավտոմեքենան (նույնացման համար՝ XLRAS47MSOE758205, գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երեւան, Ծիծեռնակաբերդի 38, ավտոկայանատեղի): Մեկնարկային գին՝ 9,100,000 ՀՀ դրամ:

Լոտ 9 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող «GAZ» մակնիշի, 2705-414 տիպարի, 2008թ. արտադրության, 017 LT 61 պետհամարանիշով, գույնը՝սպիտակ, թափքի տեսակը՝ ֆուրգոն, ՏՄ տեսակը՝բեռնատար ավտոմեքենան (գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երեւան, Ծիծեռնակաբերդի 38, ավտոկայանատեղի): Մեկնարկային գին՝1,070,000 ՀՀ դրամ:

Լոտ 10 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող «ZIL» մակնիշի, 130 տիպարի, 1969թ. արտադրության, 843 UL 64 պետհամարանիշով, գույնը՝կապույտ, թափքի տեսակը՝ ֆուրգոն, ՏՄ տեսակը՝բեռնատար ավտոմեքենան (գտնվելու վայրը՝ՀՀ, ք. Երեւան, Ծիծեռնակաբերդի 38, ավտոկայանատեղի): Մեկնարկային գին՝ 1,580,000 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/ աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված բոլոր գույքերի վրա առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 10,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները: Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման «Մուռմել-Արմանի» ՍՊԸ սնանկության գործով թիվ 2480103421570000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝ այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետեւաբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝ հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (հեռ.՝ 044200454, էլ. Փոստ՝ makar.yeg@gmail.com)՝ աշխատանքային օրերին 11:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ԱԶՆԱՎՈՒՐԻ ԵՐԳԵՐԸ՝ ՆՈՐ ՇՆՉՈՎ

Ֆրանսիական նրբագեղությամբ, բայց հայկական հնչեղությամբ ու շնչով. Ազնավուրի երգերը Newmag-ը շարունակում է թարգմանել հայերեն ու ներկայացնել նորովի՝ գրական ու երաժշտական:

Հինգերորդ երգի պրեմիերան տեղի կունենա Newmag գրքի ձմեռային փառատոնի շրջանակում:

Que C'est Triste Venise (Վենետիկն է տխրում). աշխարհահռչակ շանսոնյե Շառլ Ազնավուրի «Վենետիկն է տխուր» երգը Newmag հրատարակչության նախաձեռնությամբ թարգմանվել է հայերեն: Սա Newmag-ի թարգմանությամբ Ազնավուրի թվով 5-րդ երգն է: Երգը կատարում է Անդրեն, տեսահոլովակի պրեմիերան տեղի կունենա փետրվարի 18-ին Newmag Winter Fest 2023 գրքի փառատոնի ժամանակ:

Ազնավուրի ամենամեղեդային, սիրառատ ու տպավորիչ գործերից մեկի տեսահոլովակի նկարահանումները կատարվել են հենց Վենետիկում:

Rest (Մնա). ազնավուրյան արվեստի հայաֆիկացումը Newmag հրատարակչությունը նախաձեռնել էր դեռեւս 2021 թվականին՝ առաջին երգը ներկայացնելով Ազնավուրի հայերեն հրատարակված 5-րդ գրքի՝ «Հայրս՝ այդ հսկան» շնորհանդեսի ժամանակ: Rest (Մնա) ստեղծագործությունը կատարել է Էրիկ Կարապետյանը:

Emmenez-moi (Տարե՛ք ինձ). «Տարե՛ք ինձ այդ ափերը հեռու, տարե՛ք այնտեղ, ուր ամառ է արեւ, արեւի տակ այս կյանքի բեռը միգուցե կլինի մի քիչ թեթեւ». այսպես է հնչում Ազնավուրի Emmenez-moi երգի հայերեն թարգմանված տարբերակը, որը կոչվում է «Տարե՛ք ինձ»: 2021 թվականի հոկտեմբերին ներկայացված երգը կատարում է Շուշան Պետրոսյանը: Օրիգինալ երգի բառերի եւ երաժշտության հեղինակը շանսոնյեն է, թարգմանությունը կատարել է Պերճ Թյուրաբյանը: «Տարե՛ք ինձ» տեսահոլովակի ռեժիսորը Հարութ Շատյանն է, նկարահանումները կատարվել են Սեւանա լճում: Newmag-ը երգի պրեմիերան նախաձեռնել էր Ազնավուրի La Boheme (Անցած օրեր) գրքի շնորհանդեսի ժամանակ:

Qui (Ով). Շառլ Ազնավուրի՝ 20 տարվա տարիքային տարբերությամբ սիրո մասին պատմող Qui՝ (Ով) երգի հայերեն տարբերակը եւս հանրայնացվեց Newmag-ի թարգմանությամբ: Երգը թարգմանել է Սամվել Գասպարյանը, կատարում է Սոֆի Մխեյանը, երաժշտական պրոդյուսերը Մարտին Միրզոյանն է:

Mourir d'aimer (Մեռնել սիրելով). երգ, որի ոգեշնչումը ողբերգական սիրո իրական պատմություն է: 1969-ին Ֆրանսիայում 39-ամյա ուսուցչուհի Գաբրիելա Ռուսիեյը սիրահարվել էր իր անչափահաս աշակերտին: Ծնողները կնոջը դատի էին տվել, բայց սիրահարված կինը, չսպասելով դատավճռին, ինքնասպան էր եղել: Կինը մեռնում է սիրելով, իսկ Ազնավուրն այս հուզիչ սիրո պատմությունը վերածում է երգի՝ այն նկարագրելով իր ուրույն ոճով, մեղեդային ու նուրբ հնչեղությամբ:

Բանաստեղծության թարգմանության հեղինակը Սամվել Գասպարյանն է: Ազնավուրի «Մեռնել սիրելով» երգը կատարել է Սյուզաննա Մելքոնյանը: Newmag Winter Fest 2023-ը տեղի կունենա փետրվարի 18-ին «Կոնգրես» հյուրանոցում: Փառատոնի շրջանակում նախատեսվում են շնորհանդեսներ, տարբեր հանդիպումներ ու պանելային քննարկումներ, համագործակցության հուշագրերի ստորագրում եւ գրքերի վաճառք մինչեւ 40% տոկոս զեղչով:

ՀՊԱՐՏԱՑԵԼ Է

«ՄԵՆՔ ՍԵՐՄԵՐ ԵՆՔ ՏԱԼԻՍ». ԱԼԵՔՍԻՍ ՕՀԱՆՅԱՆ

Ամերիկահայ հայտնի գործարար, Reddit-ի համահիմնադիր Ալեքսիս Օհանյանը ցանկացած առիթ օգտագործում է իր հայկական արմատներով ու ժառանգությամբ հղարտանալու համար: Աշխարհահռչակ թենիսիստուհի Սերենա Ուիլյամսի ամուսինը բավականին ակտիվ է սոցիալական ցանցերում, որտեղ, դարբերաբար, կիսվում է իր առօրյայով: Ինստագրամյան իր ամենաթարմ հրապարակման մեջ Օհանյանը տեղադրել է մի լուսանկար, որում դստեր եւ ծնողների հետ գոլֆի դաշտում է: Նա հայտնել է, որ դստեր՝ Օլիմպիայի հետ հրաշալի ժամանակ են անցկացրել եւ հիանալի վարժանքներ ունեցել:

Մեկնաբանություններում գործարարի հեռտեւորդների ուշադրությունը գրավել է փոքրիկ Օլիմպիան: Քոմենթներից մեկում ասվում է՝ «Օհանյանի գեները գերիշխում են», ինչին հաջորդել է անձամբ Օհանյանի մեկնաբանությունը. «Մեզ փորձում էին թաղել, բայց մենք սերմեր ենք տալիս»:

ԼՈՒՐԵՐ

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԸ ՆՄԱՆ ԵՆ

Ռեփեր Ջիգանը բուժում է ստանում «Poca» մասնավոր հոգեբուժական կլինիկայում:

Լրատվամիջոցների աշխատակիցներն ուսումնասիրել են Ջիգանի նկարները հիվանդանոցից եւ համեմատել դրանք «Poca» կլինիկայի պաշտոնական կայքի լուսանկարների հետ: Լրագրողները նշել են, որ ինտերիերը եւ այլ մանրամասներ մեծապես համընկնում են: Հիվանդանոցը մասնագիտացած է դետոքս ծրագրերի, հոգեբանական ու հոգեբուժական հիվանդությունների բուժման մեջ, եւ հիվանդներին օգնում են վերականգնվել նյարդային խանգարումներից, ինչպես նաեւ դեպրեսիվ վիճակներից հետո: Կլինիկան օգնում է նաեւ ազատվել ալկոհոլից, նիկոտինից եւ թմրամոլությունից ուենցած կախվածությունից:

ԳԻՆԵԳՈՐԾԱՐԱՆԸ ԿՎԱՃԱՌՎԻ

Mout Hennessy-ն ձեռք կբերի ֆրանսիական Minuty գինեգործական կալվածքի բաժնետոմսերի մեծամասնությունը, որն արտադրում է վարդերից պատրաստված ամենապահանջված գինիներից մի քանիսը:

Mout Hennessy ընկերությունը՝ LVMH կոնգլոմերատի գինիների եւ ալկոհոլային խմիչքների բաժինը, ռազմավարական դաշինք է հայտարարել ֆրանսիական գինի արտադրող Minuty-ի հետ:

Գործարքի պայմանները չեն բացահայտվել, սակայն դրանք ներառում են ֆրանսիական ընկերության բաժնետոմսերի մեծամասնությունը ձեռք բերելու կետ: Նրա ներկայիս տնօրեններ եւ գործընկերներ Ժան-Էտյենը ու Ֆրանսուա Մատտոնը, որոնք ֆրանսիական գինեգործարանի հիմնադրի ժառանգներն են, կշարունակեն ղեկավարել ընկերությունը:

Minuty կալվածքը կառուցվել է 19-րդ դարի երկրորդ կեսին, եւ 1936 թվականին այն ձեռք է բերել Մաթոնի նախահայր Գաբրիել Ֆարնը: Այն գտնվում է Սեն-Տրոպեում եւ առավել հայտնի է իր Chteau Minuty վարդերի գինով: Ալկոհոլային խմիչքը վաճառվում է մոտ 100 երկրներում: Ընկերության տվյալներով՝ 2022 թվականին այն վաճառել է 9 միլիոն շիշ ամբողջ աշխարհում:

«Ելնելով արտահանման մեծ պահանջարկից՝ այս դաշինքը կուժեղացնի Minuty գինիների զարգացումը միջազգային մակարդակում՝ օգուտ տալով Ros de Provence-ի ողջ կատեգորիային», - ասել է Mout Hennessy-ի նախագահ եւ գործադիր տնօրեն Ֆիլիպ Շաուսը:

● *Փետրվարի 18-ին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Ալադին» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 14:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե ինչ արգելանքներ կան իմ նկատմամբ հարկադիրում: Ո՞ւմ դիմել եւ ինչպե՞ս պարզել:

Լիանա Սարգսյան (22 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ճշտելու համար, թե արդյոք դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում Ձեր վերաբերյալ առկա են հարուցված վարույթներ, եւ կիրառված են արդյոք արգելանքներ, բավարար է միայն ձեռքի տակ ունենալ սեփական սոցիալական քարտը կամ նույնականացման քարտը, որտեղ նշված է Ձեր հանրային ծառայության համարանիշը՝ ՀԾՀ-ն: Սոցիալական քարտի 10-նիշանոց համարը՝ ՀԾՀ-ն, յուրաքանչյուր քաղաքացու պետության կողմից կյանքում տրվում է մեկ անգամ եւ ենթակա չէ փոփոխման: Արգելանքների առկայության մասին տեղեկություններ կարող եք ստանալ միանգամից մի քանի եղանակով, եւ ամենեւին էլ անհրաժեշտ չէ ներկայանալ Հարկադիր ծառայություն:

ՀՀ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Անհրաժեշտ է այցելել հարկադիր ծառայության պաշտոնական կայք, ֆիզիկական անձի դեպքում՝ ընտրել ՀԾՀ պատուհանը, լրացնել Ձեր սոցիալական քարտի համարը, նշել ստուգիչ կոդը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ ընտրել ՀՎՀՀ պատուհանը, լրացնել իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ՀՎՀՀ-ն, նշել ստուգիչ կոդը եւ սեղմել որոնում: Համակարգը ավտոմատ կերպով կբերի բոլոր այն կատարողական վարույթներն ու անհրաժեշտ տվյալները, որոնք առկա կլինեն Ձեր վերաբերյալ: Եթե որեւէ տվյալներ չգտնվեն, դա կնշանակի, որ Ձեր վերաբերյալ որեւէ վարույթ առկա չէ:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Դատարանից գրություն եմ ստացել, որ բանկն ինձ դատի է տվել վարկը չմարելու համար, եւ կից ուղարկել են «Հայցադիմում» վերնագրով փաստաթուղթ. ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:

Լյուդմիլա Հովհաննիսյան (55 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայցադիմումը բանկի կողմից կազմված այն փաստաթուղթն է, որով ներկայացրել են իրենց պահանջները դատարանին՝ ընդդեմ Ձեզ: Հայցադիմումի մեջ հստակ նշված է, թե, ըստ բանկի, որքան է կազմում պարտքի գումարը, ինչպես է այն գոյացել, եւ ինչ հիմքով է բանկը ցանկանում այն բռնագանձել Ձեզանից: Ստանալով դատարանի որոշումը՝ այդ պահից սկսած՝ երկշաբաթյա ժամկետում, Դուք իրավունք ունեք դատարանին ներկայացնել հայցադիմումի պատասխան, որի մեջ պետք է մանրամասն շարադրեք, թե ինչու եք առարկում բանկի պահանջների դեմ:

ՀՀ բարձրագույն դատական խորհուրդ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայցադիմումի պատասխանը պետք է ստորագրեք Դուք կամ Ձեր ներկայացուցիչը: Ներկայացուցչի ստորագրած պատասխանին կցվում է նրա լիազորությունը հավաստող փաստաթուղթը եւ անձը հաստատող փաստաթղթի պատճենը: Հայցադիմումի պատասխանին կցվում են հայցադիմումի պատասխանը, կից ներկայացվող փաստաթղթերը եւ ապացույցները, բանկին եւ գործին մասնակցող մյուս անձանց ուղարկելը հավաստող փոստային անդորրագրերը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Ավտոտնակի սեփականատիրոջը երեւի թե շատ են հունից հանել անտեղի կայանումները, եւ նա այսպիսի «կտրուկ» միջոցի է դիմել:

Ամեն դեպքում, խորհուրդ է տրվում կոչն ընդունել հումորով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **16.02.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: